

**ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԶԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ
ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

Տիգրան ՍԱՖԱՐՅԱՆ
ԵՄՅ ասպիրանտ

Բանալի բառեր. փոքր և միջին ձեռնարկատիրություն, խոշոր բիզնես, փոքր բիզնեսի պետական աջակցություն, փոքր և միջին բիզնեսի սուբյեկտներ, զբաղվածություն

Շուկայական հարաբերությունների պայմաններում ձեռնարկատիրության ոլորտի խնդիրները ձեռք են բերում կարևոր նշանակություն, որոնց լուծմամբ է մեծապես պայմանավորված տնտեսության զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ձևավորումը: Մասնագիտական գրականության և վիճակագրական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ երկրում առկա տնտեսական և սոցիալական խնդիրների լուծման գործում չափազանց մեծ է փոքր և միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) ոլորտի դերը: Այս տեսանկյունից, բավականաչափ ուշագրավ է Ա. Շուլուսի կողմից կատարված մեկնաբանությունը տնտեսության տվյալ սեկտորի վերաբերյալ, ըստ որի փոքր և միջին ձեռնարկությունները կոչված են առանց զգալի կապիտալ ներդրումների տեղական հումքի օգտագործմամբ ընդլայնել սպառողական ապրանքների և ծառայությունների արտադրությունը և դրանք մոտեցնել սպառողներին:¹ Իսկ Վ. Գրիբովի կարծիքով ՓՄՁ դերն արտահայտվում է նոր աշխատատեղերի ստեղծման, ապրանքների և ծառայությունների արտադրության, խոշոր բիզնեսի կարիքների բավարարման և մի շարք այլ խնդիրների լուծման մեջ: Փոքր և միջին բիզնեսն ապահովում է անհրաժեշտ ճկունություն, կոոպերացիոն արտադրության զարգացում, ինչն էլ պայմանավորում է տվյալ սեկտորի արդյունավետությունը:²

ՓՄՁ ոլորտն օբյեկտիվորեն զարգանում է որպես ժամանակակից շուկայական տնտեսության հարաբերականորեն ինքնուրույն սեկտոր: Այն ունի կարևոր սոցիալ-տնտեսական նշանակություն, քանի որ ապահովում է երկրի քաղաքական և տնտեսական կայունությունը, մեղմում է կառուցվածքային փոփոխությունների անցանկակալի հետևանքները, արագ հարմարվում է շուկայի կարիքներին և լայնորեն կիրառում է նորարարություններ և նոր տոխնոլոգիական լուծումներ: Մ. Լապուստան և Յու. Ստարոստինը ՓՄՁ ոլորտի դե-

¹ Шулуc A. Становление системы поддержки малого предпринимательства в России. Российский экономический журнал. 1997г. N 5

² Грибов В. Менеджмент в малом бизнесе. М.: Финансы и статистика. 1999 г. Стр. 5

րը երկրի տնտեսական կյանքում պայմանավորում են հետևյալ գործոններով.³

- շուկայական տնտեսության սուբյեկտների ընդհանուր թվում փոքր և միջին ձեռնարկությունների և անհատ ձեռնարկատերերի թվաքանակը,
- երկրի համախառն ներքին արդյունքում ՓՄՁ ոլորտի բաժնեմասը,
- բյուջետային համակարգի տարբեր մակարդակների բյուջեների եկամուտների մեջ ՓՄՁ բաժնեմասը,
- տվյալ ոլորտում զբաղվածների թվաքանակը և գործազրկության կրճատման գործում ունեցած մասնակցությունը,
- փոքր և միջին ձեռնարկությունների կողմից սպառողական ապրանքների շուկաների հագեցման աստիճանը:

Տնտեսության զարգացման գործում ՓՄՁ ոլորտի շարունակաբար աճող դերակատարման մասին է վկայում նաև տվյալ ոլորտի սուբյեկտների թվաքանակի աճը ԵՄ անդամ պետություններում, որը 2012-2014 թվականներին ունեցել է հետևյալ պատկերը:

Աղյուսակ 1.⁴ ԵՄ-ում գործող ՓՄՁ սուբյեկտների թվաքանակը 2012-2014 թվականներին (մլն)


	Գերփոքր	Փոքր	Միջին
2012	18.8	1.3	0.22
2013	19	1.4	0.22
2014	19.7	1.4	0.23

Փաստորոշեն, ինչպես երևում է աղյուսակ 1-ից, բոլոր կատեգորիաների գծով արձանագրվել է թվաքանակի աճ: Այսինքն, վերջին երեք տարիների ընթացքում ԵՄ անդամ պետություններում ՓՄՁ բոլոր սուբյեկտների թիվը աճել է, ինչը ևս մեկ անգամ վկայում է տնտեսության տվյալ հատվածի շարունակական զարգացման մասին:

Հաջորդ կարևոր խնդիրը, որի լուծման գործում իր սեփական ծանրակշիռ մասնակցությունն ունի ՓՄՁ ոլորտը, զբաղվածության ապահովումն է: Միջազգային պրակտիկայում վերջին տարիներին արձանագրված ցուցանիշները ևս մեկ անգամ հաստատում են նման տեսակետը:

³ Лапушта М. , Старостин Ю. Малое предпринимательство. 2-ое издание. М.: Инфра М 2002г., стр 11.

⁴ Развитие малого и среднего предпринимательства. Европейский опыт. Группа Внешэкономбанка. М.: 2012г., стр. 5.




Գծապատկեր 1. ՓՄՁ սուրբեկտներում զբաղվածության աճի տեմպերը ԵՄ-ում (%)⁵

Ինչպես երևում է գծապատկեր 1-ից, 2010-2013 թվականներին ինչպես խոշոր, այնպես էլ փոքր և միջին ձեռնարկություններում զբաղվածության մակարդակն ունեցել է տատանողական բնույթ: 2013 թվականից սկսած գրանցվել են աճի միտումներ և 2014 թվականին գրեթե հավասարվել:

Բավականաչափ ուշագրավ է նաև ՓՄՁ ճյուղային կառուցվածքը ԵՄ անդամ պետություններում: Տվյալ ոլորտում գործող սուրբեկտների հիմնական մասը՝ 22 տոկոսն իր գործունեությունը իրականացնում է առևտրի, իսկ 21 տոկոսը՝ արդյունաբերության ոլորտում: Փաստորեն, ՓՄՁ սուրբեկտների միայն 43 տոկոսը տեղաբաշխված է առևտրի և արդյունաբերության ոլորտներում: Ավելի համեստ մասնակցություն է առկա տրանսպորտի և անշարժ գույքի ոլորտներում, որոնցում ՓՄՁ ներկայացվածությունը կազմում է 6 տոկոս:

⁵ Развитие малого и среднего предпринимательства. Европейский опыт. Группа Внешэкономбанка. М.: 2012г., стр. 6.



Գծապատկեր 2. ՓՄՁ ճյուղային կառուցվածքը Եվրոպայում 2012 թվականին⁶

Պետք է նաև նկատի ունենալ, որ, հատկապես փոքր ձեռնարկությունների առումով, գրանցվածների և գործունեություն իրականացնողների թվաքանակը շատ փոփոխական է: Մասնավորապես, վերլուծությունները ցույց են տալիս, որ Մեծ Բրիտանիայում նոր ստեղծված փոքր ձեռնարկություններից յուրաքանչյուր երրորդն իր գործունեությունը 3 տարի անց դադարեցնում է, իսկ գրանցումից 6 տարի հետո ընդամենը 35 տոկոսն է շարունակում իր գործունեությունը: Գերմանիայում յուրաքանչյուր տարի ստեղծվում են մոտ 40 հազար փոքր ձեռնարկություններ և միաժամանակ 20-25 հազարը դադարեցնում են իրենց գործունեությունը: Իհարկե, փոքր և միջին ձեռնարկությունների «կյանքի տևողությունը» խիստ կարևոր է հատկապես նրանց ֆինանսավարկային աջակցության ցուցաբերման առումով: Պատահական չէ այն տեսակետի գոյությունը, որ փոքր և միջին ձեռնարկությունների «տարիքը» ոչ

⁶ Развитие малого и среднего предпринимательства. Европейский опыт. Группа Внешэкономбанка. М.: 2012г. Стр. 10

պակաս կարևոր է շահութաբերությունից:⁷ Ձեռնարկության գործունեության ժամկետի 3 տարուց գերազանցումը համարվում է հուսալիության գործոն, քանի որ սովյալ սուբյեկտն այդ ժամանակահատվածում արդեն իսկ ենթարկվել է ստուգումների նախ և առաջ հարկային մարմինների կողմից: Անգամ ԱՄՆ-ում փոքր ձեռնարկությունների ընդամենը 25 տոկոսն է հաղթահարում եռամյա ժամանակահատվածը:

Հարկ է նշել, որ ժամանակակից շուկայական տնտեսության պայմաններում ՓՄՁ ոլորտի դերն ու նշանակությունը դրսևորվում է ոչ միայն քանակական, այլ նաև ֆունկցիոնալ նշանակության խնդիրների լուծմանն անմիջական մասնակցությամբ: Վերջիններիս շարքին կարելի է դասել տնտեսական կոնյուկտուրայի փոփոխություններով պայմանավորված բացասական հետևանքների մեղմումը, մրցակցային միջավայրի զարգացումը, ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը, մակրոտնտեսական գործընթացների կայունացումը, ինովացիոն ներուժի զարգացումը և այլն: Շատ դեպքերում ՓՄՁ ոլորտի սուբյեկտներն են զբաղվում այնպիսի ապրանքների և սարքավորումների արտադրությամբ, որը խոշոր բիզնեսի հետաքրքրությունների շրջանակից դուրս է: Այլ կերպ ասած, ՓՄՁ սուբյեկտները հանդես են գալիս յուրօրինակ օժանդակողի և խոշոր բիզնեսի հետ կոոպերացիոն հարաբերությունների մասնակցի դերում: Ավելին, նրանց կողմից մանր սերիական մասնագիտացված արտադրությունների կազմակերպումը և իրականացումը խոշոր բիզնեսի հետ համագործակցության յուրահատուկ դրսևորում է:

Հաջորդ կարևոր խնդիրը, որի լուծմանն իր յուրահատուկ մասնակցությունն է ունենում ՓՄՁ ոլորտը, դա մրցակցային միջավայրի զարգացումն է: Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ նշված ոլորտին պատկանող յուրաքանչյուր սուբյեկտ առանձին վերցրած չի կարող դիմանալ խոշոր բիզնեսի հետ մրցակցությանը: Սակայն որպես տնտեսության առանձին սեկտոր, ՓՄՁ ոլորտն ապահովում է շուկայում որոշակի մրցակցություն և հնարավորություն չի տալիս խոշոր բիզնեսին էական ներգործություն ունենալ ոչ շուկայական մեխանիզմների վրա հիմնված գնագոյացման և ապրանքների ու ծառայությունների բաշխման գործընթացի վրա: Միևնույն ժամանակ, նման մրցակցությունն, իր հերթին, խթանում է նորարարությունների ներդրմանը, նոր գաղափարների և ձեռնարկատիրական հակումների իրացմանը, ինչպես նաև աշխատանքային, տեխնոլոգիական, կազմակերպական և այլ ռեսուրսների ռացիոնալ օգտագործմանը:

⁷ А. Ястриб. Кредитные риски малого и среднего бизнеса. Журнал «Банковское дело в Москве» N 12(60).1999г.

ՓՄՁ ոլորտի դերը չափազանց մեծ է նաև սոցիալական խնդիրների լուծման գործում: Ըստ էության, այն ավելի շատ իրականացնում է սոցիալական, քան տնտեսական գործառույթ: Իհարկե, ինչպես արդեն նշվեց, այն կարևոր նշանակություն ունի մի շարք ցանկալի տնտեսական ցուցանիշների ապահովման գործում: Սակայն, դրանով հանդերձ, տվյալ ոլորտը, նախ և առաջ, նպաստում է հասարակական կյանքի կայունության ապահովմանը, այդ թվում նաև սոցիալական խնդիրների լուծմանը, ընտանեկան բիզնեսի զարգացմանը, ձեռնարկատիրական հակումների իրացմանը և երիտասարդության հիմնախնդիրների լուծմանը: Մեծ է ՓՄՁ ոլորտի ազդեցությունը նաև երկրի քաղաքական կյանքի կայունության վրա: Հանդիսանալով միջին խավի ձևավորման հիմնական հարթակ, փոքր և միջին բիզնեսը մեծ հակվածություն է ցուցաբերում ժողովրդավարական արժեքների, քաղաքական կայունության և տնտեսական ազատության հանդեպ:

Երկրի տնտեսական և հասարակական կյանքում ՓՄՁ ոլորտը ևս մեկ, մեր կածիքով, չափազանց կարևոր գործառույթ է իրականացնում, որը դրսևավորվում է տարածքային զարգացման գործընթացում ունեցած էական մասնակցության մեջ: Հայտնի է, որ տնտեսական և սոցիալական լարվածությունն առավել վառ է արտահայտվում երկրի թույլ զարգացած ենթակառուցվածքներ ունեցող տարածաշրջաններում, որոնք, գտնվելով հեռու առևտրաարդյունաբերական կենտրոններից, բազմաթիվ դժվարություններ ունեն տնտեսական կյանքի կազմակերպման հարցում: Այս առումով, նման տարածաշրջանների զարգացման գործում մեծ դերակատարում կարող է ունենալ ՓՄՁ ոլորտը, որն օգտագործելով արտադրատնտեսական գործունեության կազմակերպման իրեն բնորոշ առավելությունները, հնարավորություն ունի էականորեն նպաստելու տարածքային զարգացմանը: Եվ պատահական չէ, որ ՓՄՁ ոլորտի գործունեությունն ունի ընդգծված ռեզիլենսլ բնույթ և առևտրաարդյունաբերական կենտրոններից հեռավորությունը ավելի շատ խթանիչ գործոն կարող է հանդիսանալ ՓՄՁ սուբյեկտների համար:

Ամփոփելով, պետք է նշել, որ փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտն առանձնահատուկ նշանակություն ունի երկրի քաղաքական, տնտեսական և սոցիալական կյանքում, որը դրսևորվում է նրա կողմից իրականացվող գործառույթներում: Ըստ էության, դրանց լիարժեք և արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ միջավայրի ձևավորումը պետք է հանդիսանա տվյալ ոլորտի զարգացմանն ուղղված պետական քաղաքականության առանցքային ուղղություններից:

Տիգրան ՍԱՖԱՐՅԱՆ

Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի գործառույթները շուկայական տնտեսության պայմաններում

Բանալի բառեր. փոքր և միջին ձեռնարկատիրություն, խոշոր բիզնես, փոքր բիզնեսի պետական աջակցություն, փոքր և միջին բիզնեսի սուբյեկտներ, զբաղվածություն

Չողվածը նվիրված է շուկայական տնտեսության պայմաններում փոքր և միջին ձեռնարկատիրության կողմից իրականացվող գործառույթների ուսումնասիրությանը: Վերլուծության է ենթարկվել փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի դերը տնտեսական աճի և զբաղվածության ապահովման գործում, ներկայացվել են դրա մասնակցության դրսևորումները մի շարք տնտեսական և սոցիալական խնդիրների լուծման գործում: Դիտարկվել է փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի հնարավոր մասնակցությունը երկրի տարածքային զարգացման գործում: Ներկայացվել են մոտեցումներ փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի գործառույթների պատշաճ և լիարժեք իրականացման համար:

Тигран САФАРЯН

Функции малого и среднего бизнеса в условиях рыночной экономики

Ключевые слова: малое и среднее предпринимательство, крупный бизнес, государственная поддержка малого бизнеса, субъекты малого и среднего бизнеса, занятость

Статья посвящена изучению функций малого и среднего бизнеса в условиях рыночной экономики. Проанализирована роль малого и среднего бизнеса в обеспечении экономического роста и занятости, представлены проявления его участия в решении ряда экономических и социальных задач. Рассмотрена возможность участия малого и среднего бизнеса в региональном развитии страны. Представлены подходы достойного и полноценного исполнения функций малого и среднего бизнеса.

Tigran SAFARYAN

Functions of small and medium business in terms of market economy

Key words: small and medium business, large business, government support small business, subjects of small and medium business, employment

The article is devoted to the examination of functions of small and medium business in terms of market economy. The role of small and medium business in economic growth and employment, as well as manifestations of its participation among economic and social problems has been analyzed. Opportunity of participation of small and medium businesses in regional development of a country has been considered. The approaches of proper functioning of small and medium business have been presented in the article.